ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մ. Խ. ՔՈԹԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Վերակառուցման հետ կապված տնտեսագետների խնդիրներն անհամեմատ ավելի բարդ են, քան հասարակագիտության մյուս բնագավառներինը (պատմագիտությանը, փիլիսոփայությանը և այլն), որովհետև տնտեսագիտությունն առնչվում է ոչ միայն տեսական, տնտեսագիտական պրոբլեմների լուծման, այլ նաև երկրի տնտեսական կառավարման ամենաբարդ համակարգի գործնական խնդիրների գիտական մշակման հետ։ Դրանք լուրջ պրոբլեմներ են, որոնք տասնյակ տարիներով կուտակվել, ոչ ճիշտ լուծում են ստացել, աղավաղվել ու կեղծվել, հարմարեցվել ու թմբկահարվել են ավելի շատ որպես լոզունգներ և ոչ որպես գիտություն։ Անհրաժեշտ է, ինչպես նշել է Մ. Ս. Գորբաչովը, «սոցիալիզմն ազատել ամեն կեղծ սոցիալիստականից, անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում աղավաղվածից, ձևախեղվածից, հրամայական սիստեմի լճացումից, վերադարձնել սոցիալիզմին իսկական լենինյան իմաստը»[1]։

Սոցիալիզմը կեղծ սոցիալիստականից ազատելու համար անհրաժեշտ է, ըստ էության, այն համապատասխանեցնել իր բովանդակությանը, ինչպես իր գիտական զարգացող սոցիալ-տնտեսական սիստեմով, այնպես էլ իր քաղաքական կառուցվածքի, իրավական, գաղափարական կյանքի, դեմոկրատիայի իրական բովանդակությամբ։ Այլ խոսքով, լոզունգային, առարկայազուրկ պրոպագանդիստական սոցիալիզմի նկարագրից անցում կատարել դրա իրական բովանդակության և նկարագրի ձևավորմանը, որը համապատասխանի և նպաստի մարդկային ամենակատարյալ հարաբերությունների ստեղծմանը կյանքի բոլոր ոլորտներում։ Դա նշանակում է, որ այսօր սոցիալիզմի մասին մենք պետք է խոսենք ոչ թե գաղափարախոսության մեջ ձևակերպված նկարագրով, այլ իրական կյանքում եղած սոցիալ-տնտեսական, բարոյաքաղաքական պատկերով, ոչ թե օրենսդրական ձևակերպում ստացած ակտերով, պետական և կառավարական որոշումներով, այլ կյանքում դրանց կիրառման ու դրսևորման արդյունքներով։ Մի խոսքով, նրանով, ինչ կյանքում կա և որն իբրև սոցիալիզմ է հրամցվում կյանքում։ Գրքային սոցիալիզմի ժամանակները վաղուց անցել են, որովհետև երկրագնդում արդեն ավելի քան 70 տարի սոցիալիզմի գործնական կառուցման քայլեր են կատարվել, ի լուր աշխարհի սոցիալիզմի կառուցումն ավարտված է համարվել և դրան համապատասխան սահմանադրություն է ընդունվել, երկիրը սոցիալիստական է կոչվել։

Քանի որ իրական կյանքում սոցիալիզմի բնութագիրը քիչ ընդհանուր բան ունի նրա տեսության մեջ եղած պատկերի հետ, ուստի անհրաժեշտ է այն վերակառուցել, համապատասխանեցնել իր իսկական նկարագրին։ Բայց պետք է նկատել, որ մարդկության համաշխարհային զարգացման ժամանակակից ձեռք բերած նվաճումների բազայի վրա գիտական ճշգրտման կարիք է զգում նաև սոցիալիզմի տեսական նկարագիրը։

Վերակառուցման բնագավառում տնտեսագետների խնդիրը հստակ պարզելու համար մենք պետք է իմանանք դրա նպատակը և այդ նպատակին հասնելու համար գործող համակարգի բոլոր խանգարող կողմերը։ Վերակառուցման նպատակն է, եթե կարելի է այսպես ձևակերպել, ստեղծել հասարակա-

[1] «Սովետական Հայաստան», 12.V.1988։

կան, տնտեսական, քաղաքական կյանքի կառավարման այնպիսի համակարգ, որը հնարավորություն տա բարձր արդյունավետությամբ օգտագործել երկրի նյութական ու հոգևոր պոտենցիալը և ապահովել ժամանակակից մարդու նյութական, հոգևոր ու այլ բնույթի պահանջմունքների բավարարումը։

Նման խնդրի լուծումը պահանջում է, առաջին հերթին, արմատական վերակառուցման ենթարկել այսօրվա կառավարման տնտեսական համակարգը։ Մեր տնտեսության կառավարման հրամայական (կարգադրական)-վարչական համակարգից պետք է անցում կատարել գերազանցապես տնտեսական մեթոդներով կառավարման համակարգի։

Ինչպես հայտնի է, հրամայական-վարչական կառավարումը մի համակարգ է, որտեղ հիերարխիկ կառավարման բոլոր աստիճանների գործունեությունը կարգավորվում է վերադասի հրամաններով, կարգադրություններով, հրահանգներով, սահմանված լիմիտներով։ Ներքին օղակները գործում են ոչ թե կյանքի անհրաժեշտությունից բխող տնտեսական, հասարակական խնդիրների լուծման թելադրանքով, այլ վերադասից ստացած հրամաններով, կարգադրություններով, հրահանգներով, լիմիտներով։ Այլ խոսքով, այն բացառում է հասարակական արտադրության անմիջական կառավարողների նախաձեռնությունը։ Ամեն մի նախաձեռնություն, անկախ դրա արդյունքից, դիտվում է սահմանված կառավարման համակարգի խախտում և պատժվում է։ Նման պայմաններում կոլեկտիվների ղեկավարների մեջ մշակվում է ինքնապահովման սիստեմ (հրաժարվել ամեն տեսակ նախաձեռնությունից, կոլեկտիվում խեղդել դրանց ամեն մի դրսևորումը)։ Ղեկավարի աշխատանքի գնահատման չափանիշը դարձավ ոչ թե նրա ղեկավարած կոլեկտիվի աշխատանքի արդյունքի փաստական գնահատականը, այլ հրամանների, կարգադրությունների փաստաթղթային ձևակերպումը և «կատարումը»։ Ավելին, ղեկավարները սկսեցին գնահատվել ոչ թե իրենց ունակություններով, նախաձեռնությամբ, ստեղծագործական աշխատանքով, այլ կարգադրական կարգապահությամբ։ Այդ մոտեցումը տարածվեց մեր հասարակական կյանքի բոլոր բնագավառների, այդ թվում գիտության, մասնավորապես, հասարակագիտության վրա։ Գիտության բնագավառում նորն անցնում էր դժոխքի բոլոր ճանապարհներով, որովհետև այն խախտում էր գիտության բոլոր բնագավառների համար արդեն նշանաբան դարձած «ինչպես ընդունված է» սկզբունքը, որի հետևում կանգնած էին տվյալ ժամանակի, տվյալ բնագավառի գիտության բոլոր աստղերը՝ իրենց ամենաբարձր տիտղոսներով ու պաշտոններով։ Գիտության մեջ տիրապետեց ոչ թե որն է ճիշտը, այլ ինչպես է ընդունված սկզբունքը։

Հրամայական-վարչական կառավարման համակարգն անգամ ամենաճիշտ հրամանների և կարգադրությունների պայմաններում հակասում է գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին։ Մեր դարը պահանջում է տեխնիկական մշակման ամենաարագ կիրառում, անարգել շարժ դեպի հասարակական-տնտեսական կյանքի ոլորտը, իսկ հրամանների, կարգադրությունների շարժը հիերարխիկ կառավարման համակարգի մեկ աստիճանից մյուսին անցումը, մինչև կատարողին հասնելը, արդեն որոշակի ժամանակի և, հետևապես, տեմպի կորուստ է։

Մեր երկրում կառավարման հրամայական-վարչական համակարգը հասցրեց արտադրական ու գիտատեխնիկական քանակական մեծ պոտենցիալի ստեղծման և գնահատման որոշ ցուցանիշների գծով աշխարհում դուրս եկանք առաջին շարքերը։ Դրանք են՝ հիմնական արտադրական ֆոնդերի ու բեռնաշրջանառության ծավալը, ժողովրդական տնտեսության մեջ եղած տրակտորների քանակը, դիպլոմավոր ինժեներների, գյուղատնտեսների, գիտնականների թիվը և այլն։ ՍՍՀՄ-ում արտադրվում է երկու անգամ ավելի շատ հանքային պարարտանյութ , 6—7 անգամ շատ տրակտոր, 14 անգամ շատ կոմբայն, քան ԱՄՆ-ում[2]։ Բայց դրա հետ միասին այդ պոտենցիալի շարժման և

[2] «Новое время», 1988, № 16, с. 33—34.

իրական արդյունքի տեսակետից մի քանի անգամ զիջում ենք զարգացած շատ երկրների։

Հզոր պոտենցիալ ունեցող մեր երկիրը համաշխարհային շուկայում ժամանակակից տեխնիկական միջոցների արտադրությամբ (և իրացմամբ), գիտատեխնիկական մշակումներով (պատենտներով և լիցենզիաներով) գտնվում է երկրորդական, երրորդական պետությունների շարքերում։

Մեր երկիրն ընկավ լճացման, նախաճգնաժամային, եթե ոչ ճգնաժամային վիճակի մեջ, որի հետևանքով մեկ շնչին ընկնող ազգային եկամտի քանակով մեր դիրքերը զիջեցինք ևս կապիտալիստական մի շարք երկրների, բնակչության կենսամակարդակի մի շարք ցուցանիշներով ընկանք 30—40-երրորդ տեղերը, զգալիորեն հետ մղվեցինք անգամ 1960-ական թվականների ձեռք բերած դիրքերից, երկրի մասշտաբով գյուղատնտեսության հետ մնալը սկսեց կրել խրոնիկական բնույթ և «հասանք» պարենային պրոբլեմի ստեղծմանը, որը յուրահատուկ չէ ոչ մի զարգացած երկրի, նյութական և ոչ նյութական արտադրության բոլոր ոլորտներում ձևավորվեց դեֆիցիտային էկոնոմիկա։ Բոլոր ապրանքները՝ արտադրության միջոցներ, սպառման առարկաներ, ինչպես նաև ծառայությունները դարձան դեֆիցիտ։ Չնայած աշխատավարձի ցածր մակարդակին, միակ ոչ դեֆիցիտային ապրանքը դարձավ փողը։ Երկրում ձևավորվեց ստվերային էկոնոմիկան իր բոլոր բացասական հետևանքներով՝ պետական միջոցների յուրացում և հափշտակում, կաշառակերություն, աշքակապություն, հավելագրում և այլն։

Հասարակագետները, առաջին հերթին տնտեսագետները, պետք է այդ հարցերին պատասխան տան ոչ թե լոզունգներով, մերկ հայտարարություններով, այլ իրական կյանքի գիտական խոր վերլուծությամբ, պրոբլեմների լուծման հիմնավոր գործնական առաջարկություններով։ Տրամաբանական է, որ դա ավանդական, ավելի քան 60 տարում «ստեղծված» և «մշակված» հասարակագիտական, տնտեսագիտական մտածողության սիստեմով կատարել հնարավոր չէ։ Պետք է մտածողության նոր սիստեմ։

Ինչպես տեսնում ենք, վերակառուցումը, մտածողության նոր սիստեմը հասարակական անհրաժեշտություն է։

Տնտեսական կառավարման համակարգի վերակառուցման ուղղությամբ արդեն ընդունվել և ընդունման պրոցեսում են գտնվում մի շարք օրենքներ ու որոշումներ, որոնց համալիր իրականացումը, հասարակական-քաղաքական կառավարման համակարգի վերակառուցման հետ միասին, հնարավորություն կտան կառավարման հրամայական-վարչական համակարգից անցում կատարել տնտեսական կառավարման համակարգին։ Այդ օրենքներից և որոշումներից առանձնակի կարելի է նշել պետական ձեռնարկությունների (միավորումների) մասին օրենքը, անհատական աշխատանքային գործունեության մասին օրենքը, կոոպերացիայի մասին օրենքը։ Որոշումներ ընդունվեցին արտադրության միջոցների բաշխման համակարգից մեծածախ առևտրի համակարգին անցնելու, ֆինանսական համակարգի վերակառուցման, տնտեսական արտաքին կապերի կատարելագործման, տնտեսական շինարարության բնագավառում տեղական սովետների դերի մեծացման, պետական ապարատի վերակառուցման, կրթական համակարգի կատարելագործման մասին և այլն։ Ներկայումս նախապատրաստվում է իրականացնել գների ռեֆորմ, ինչպես նաև ՍՄԿԿ XIX կուսակցական կոնֆերանսի որոշումներից բխող միջոցառումների մի ամբողջ շարք, որոնք կհանգեցնեն ինչպես երկրի տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքի կառավարման արմատական վերակառուցմանը։

Պետք է նկատել, որ պետական ձեռնարկությունների (միավորումների) մասին օրենքով ձեռնարկություններն անցնում են լրիվ տնտհաշվարկային և ինքնաֆինանսավորման կառավարման համակարգի։ Ընդլայնվում են դրանց իրավունքները պլանավորման, եկամուտների բաշխման, ֆինանսավարկային համակարգի հետ փոխհարաբերության, շինարարության, տեխ-

նիկական զարգացման, այլ ձեռնարկությունների և միավորումների հետ տնտեսական փոխհարաբերությունների զարգացման, տնտեսական արտաքին կապերի և այլ բնագավառներում։ Նոր օրենսդրական հիմքի վրա է դրվում ձեռնարկությունների և պետության փոխհարաբերությունը։ Սահմանված է պետական պատվերների և պետական բյուջեի հետ ձեռնարկությունների փոխհարաբերության համակարգ։

Միջոցառումների այս ամբողջ համակարգը, վերջին հաշվով, կոչված է տնտեսական կառավարման հրամայական-վարչական ձևից անցում կատարել գերազանցապես տնտեսական կառավարման մեթոդին։ Բայց, դժբախտաբար, պետք է նկատել, որ ներկայումս, չնայած մշակված այս համալիր միջոցառումներին, դարձյալ տնտեսական կառավարման համակարգում գերակշռում է վարչական մեթոդը։ Դա բացատրվում է երկու հանգամանքով. առաջին. մարդիկ, որոնք ավելի քան վաթսուն տարի ընտելացել են վերևից ստացած հրամանների, հրահանգների, ցուցումների կատարմանը, մի կողմից զրկվել են ինքնուրույն աշխատանք կատարելու ձիրքից, մյուս կողմից՝ դեռևս վերադաս կառավարման մարմինների պահպանման պայմաններում չեն կարող հաղթահարել նրանց թելադրանքին չենթարկվելու ներքին ուժը։ Երկրորդ. վերադաս ղեկավար մարմինները ձգտում են իրենց մշակած հրահանգներով ամեն կերպ պահպանել հրամայելու, կարգադրելու, ձեռնարկությունների ներքին գործերին միջամտելու իրավունքը։

Դրանք հաղթահարելու կարևոր պայմաններից է սոցիալիստական իրավական պետության ձևավորումը, որտեղ կառավարման և հասարակական կյանքի կարգավորման հիմքում ընկած կլինեն ոչ թե որոշումները, կարգադրությունները, հրահանգերը, այլ միայն օրենքը։ Ավելին, պետության և մյուս կազմակերպությունների՝ տնտեսական, հասարակական, քաղաքական, ինչպես նաև քաղաքացիների փոխհարաբերությունները կկարգավորվեն միայն ու միայն օրենքներով, երբ բոլոր կողմերը հավասարապես կօգտվեն օրենքից բխող իրենց իրավունքներից, ինչպես նաև կկատարեն միմյանց նկատմամբ օրենքից բխող իրենց պարտականությունները՝ անկախ կառավարման աստիճանակարգում իրենց գրաված դիրքից։

Կառավարման համակարգը, ինչպես ցույց է տվել պատմությունը, ծընում է համապատասխան իրավական կարգավորման համակարգ։ Կառավարման դեմոկրատական համակարգն անպայմանորեն ենթադրում է սահմանադրական իրավական համակարգ և դրա հիման վրա գործող հասարակական, քաղաքական ուժերի պայքար։ Կառավարման հրամայական-վարչական կենտրոնացված համակարգի պայմաններում սահմանադրական իրավական կարգավորումը դառնում է ձևական, չխոսող, քանի որ իրական կյանքի շարժը կարգավորվում է կառավարման հիերարխիկ համակարգի հրամանների, կարգադրությունների, հրահանգների միջոցով։ Այլ խոսքով, հասարակական, տնտեսական, քաղաքական հարաբերություններն իրականում կարգավորվում են վերադաս մարմինների որոշումներով և հրամաններով, անգամ ամենագեմոկրատիկ սահմանադրական իրավունքները դառնում են կյանքի հետ առնչություն չունեցող լոզունգներ։ Կենտրոնացված, հրամայական-կարգադրական կառավարման համակարգի պայմաններում օրենքը փոխարինվում է ակտերի ամբողջությամբ, անկախ նրանից, թե դրանք Գերագույն սովետի ակտերն են, թե մինիստրության հրամանները, որոշումները և հրահանգները։

Մեր երկրում սահմանադրական իրավունքի, օրենքի փոխարինումը կառավարման ակտերով սկսվեց այն ժամանակ, երբ գյուղատնտեսության մեջ տնտեսական ինքնուրույնությունը փոխարինվեց կոլեկտիվացմամբ և արդյունաբերական ձեռնարկությունները վերածվեցին պետականի։ Իրավունքը, ըստ էության, դադարեց հասարակական, տնտեսական հարաբերությունների կարգավարման միջոց լինելուց։ Այդ հարաբերությունների կարգավորման հիմքում դրվեցին կառավարման ակտերը։ Ավելին, այդ ակտերն աստիճանաբար ընդունեցին օրենքի ձև և ընկան հարաբերությունների, այդ թվում

տնտեսական հարաբերությունների կարգավորման հիմքում։ Տնտեսական հարաբերությունները փաստորեն դադարեցին արտադրողների միջև, ինչպես նաև արտադրողների և սպառողների միջև հարաբերություն լինելուց։ Դրանք ընդունեցին ուղղահայաց բնույթ, այսինքն՝ ձեռնարկության (արտադրողի) և վերադաս կառավարման օղակի միջև հարաբերության բնույթ, որը հիմնված է բոլոր տեսակի ֆոնդերի բաշխման, պլանային առաջադրանքների հաստատման, լիմիտների սահմանման վրա։ Ձեռնարկությունը դադարեց սպառողի համար աշխատելուց, այլ սկսեց աշխատել վերևից իջեցված ցուցանիշների համար։

Իրավունքի, տնտեսական հարաբերությունների վերականգնումը տրամաբանորեն պահանջում է կառավարման հրամայական-վարչական համակարգի վերացում։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ արմատական հեղափոխական վերակառուցումը պահանջում է ինչպես տնտեսական կառավարման, այնպես էլ վարչական, քաղաքական և իրավական համակարգի համալիր վերակառուցման իրականացում, որին համամիութենական XIX կուսակցական կոնֆերանսի որոշումներին համապատասխան ձեռնամուխ է եղել մեր երկիրը։

Հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքի վերակառուցումը պահանջում է տնտեսական օրենքների, կատեգորիաների սխեմատիկ, իրական կյանքի հետ առնչություն չունեցող մեկնաբանություններից անցնել դրանց գիտական լուսաբանման։ Դա նշանակում է, որ տնտեսագիտությունը պետք է հասնի տնտեսական օբյեկտիվ օրենքների, կատեգորիաների պահանջների և գործողության մեխանիզմի բացահայտմանը, որի վրա պետք է հիմնվի ինչպես պետության մասշտաբով ստրատեգիական խնդիրների լուծման տնտեսական ողջ քաղաքականությունը, այնպես էլ առանձին միավորումների և ձեռնարկությունների, տնտեսական կազմակերպությունների գործունեությունը, որովհետև գիտականությունից զրկված քաղաքականությունը դատապարտված է տատանումների, սխալների[3]։

Տնտեսագիտական գրականության մեջ լայնորեն թմբկահարվում էին սոցիալիզմին յուրահատուկ տնտեսական օրենքներ, որոնց գործողությունն «անարգել» ապահովում էր սոցիալիստական տնտեսության վերելքը, նրա անժխտելի առավելությունը նախորդ տնտեսական ֆորմացիաների, հատկապես կապիտալիզմի նկատմամբ։ Այսպես, սոցիալիզմի ժամանակ գործում է հասարակության բոլոր անդամների անընդհատ աճող պահանջմունքների է՛լ ավելի լավ բավարարման հիմնական տնտեսական օրենքը։ Բայց անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս է օրենքը գործում, երբ բնակչության կենսամակարդակը երկար ժամանակ մնում է նույն մակարդակի վրա, ինչպես, ասենք, լճացման ժամանակաշրջանում կամ այդ ցուցանիշի բնագավառում համաշխարհային մասշտաբով մեր դիրքերը գնալով զիջում ենք մի շարք երկրների, որտեղ այդ օրենքը, ըստ մեր գրականության, չի գործում։ Հասկանալի է, որ օրենքը չի գործում։ Ինչո՞ւ։ Գուցե այդ օրենքը մտացածին է. եթե ոչ, ապա ինչո՞ւ օրենքը չի գործել։

Կամ՝ սոցիալիզմի ժամանակ, ի տարբերություն կապիտալիզմի, գործում է ժողովրդական տնտեսության պլանաչափ-համամասնական օրենքը, որը բացառում է ժողովրդական տնտեսության մասշտաբով անհամամասնությունների առաջացումը, ճգնաժամերը, դեֆիցիտը և այլ երևույթներ։ Բայց, դժբախտաբար, ժողովրդական տնտեսության տարբեր ոլորտների, դրանց ճյուղերի միջև անհամամասնությունները, արտադրության միջոցների և ըսպառման առարկաների դեֆիցիտը, այսպես ասած, էկոնոմիկայի անընդհատ վերելքի ապահովումը իրականության հետ ոչ մի առնչություն չունեին, և մեր էկոնոմիկան ընկավ նախաճգնաժամային, եթե ոչ ճգնաժամային վիճակում։ Մի այլ օրինակ. ըստ տնտեսագիտական գրականության և քաղաքա-

3 «Սովետական Հայաստան», 12.V.1988։

տնտեսության սրբագործված դասագրքերի ու դասընթացների, սոցիալիզմի ժամանակ գործում է աշխատանքի արտադրողականության անշեղ աճի օրենքը։ Հարց է ծագում. ինչպե՞ս է գործում այդ օրենքը, երբ աշխատանքի արտադրողականության մակարդակով զարգացած երկրների շարքում գրավում ենք հետ ընկած տեղերից մեկը և համարյա տեղաշարժ չենք կատարում այդ բնագավառում։

Եվ, վերջապես, 1950-ական թվականներից մեր տնտեսագիտական և փիլիսոփայական գրականության մեջ լայնորեն պրոպագանդվող՝ սոցիալիզմի ժամանակ արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանության (կամ լիակատար համապատասխանության) տնտեսական օրենքի գործողությունը, որը իբր սոցիալիզմի ժամանակ բացառում է հասարակական արտադրության երկու կողմերի միջև հակասությունը, ինչպես նաև սոցիալիզմի ժամանակ ընդհանրապես հակասության, առավել ևս հակամարտ հակասության դրսևորումը։ Հարց է ծագում, թե առանց հակասությունների ինչպե՞ս կարող էր տեղի ունենալ զարգացում կամ այդ ինչպիսի՞ զարգացում է, որը տեղի է ունենում առանց հակասության, առանց պայքարի։

Հետաքրքիրն այն է, որ մենք ժխտում էինք սոցիալիզմի ժամանակ տնտեսական հակասություններն ընդհանրապես, բայց ընդունում էինք սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցմանը համընթաց դասակարգային հակասությունները և դասակարգային պայքարի ուժեղացումը երկու եղբայրական դասակարգերի ու նրանց ծոցից դուրս եկած մտավորականության առկայության, շահագործող դասակարգերի վերացման պայմաններում։ Ստացվում է տրամաբանությունից զուրկ մի դատողություն, ըստ որի երբ հակամարտ դասակարգերը չկան, դասակարգային հակասությունը և դասակարգային պայքարն ավելի սուր բնույթ է ընդունում, իսկ երբ արտադրողական ուժերն անընդհատ զարգանում, փոփոխվում են, արտադրական հարաբերությունների հետ հակասության մեջ չեն մտնում, կոնֆլիկտը բացառվում է։

Այսպիսի մտացածին, ոչ գիտական, անհիմն կոնցեպցիաների վրա կառուցվել է մի ամբողջական ուսմունք, որն ավելի քան վաթսուն տարի տիրապետող է դարձել մեր գաղափարախոսության, հասարակական, քաղաքական գրականության մեջ։

Կյանքը ցույց տվեց, որ սոցիալիզմի ժամանակ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև ոչ միայն առկա են հակասություններ, այլև այն, որ դրանք կարող են հասցնել տնտեսական և քաղաքական լուրջ ճգնաժամերի, կոնֆլիկտների։ Այդ են ապացուցում սոցիալիզմի կառուցման ընթացքում առաջ եկած կոնֆլիկտները, ճգնաժամերը Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, ՉԺՀ-ում, Հարավսլավիայում, ՍՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում։

Տնտեսագետների առաջնահերթ խնդիրներից է ոչ թե ժխտել հակասությունները սոցիալիզմի ժամանակ, այլ բացահայտել դրանք, ինչպես նաև մշակել դրանց լուծման գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ։

Վերին աստիճան դեկլարատիվ, սխոլաստիկ են մեկնաբանվում նաև տնտեսական կատեգորիաները սոցիալիզմի ժամանակ, բացառվում են դրանց գործողությանը յուրահատուկ ներքին հակասությունները։ Ժամանակն է ամենախոր հետազոտություններ ծավալել տնտեսական կատեգորիաների էության և գործողության մեխանիզմների գիտական մեկնաբանության ուղղությամբ, որոնք և հիմք կարող են ծառայել տնտեսական քաղաքականության գիտական մշակման համար։ Տնտեսական այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են արտադրողական ուժերը, արտադրական հարաբերությունները, տնտեսական հարաբերությունները, շահերը, ապրանքը, փողը. արժեքը, գինը, շուկան, ռենտան, «ազատ» ժամանակը, արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքը և մի շարք այլ կատեգորիաներ, սոցիալիզմի ժամանակ սպասում են իրենց գիտական մեկնաբանությանը։

Տնտեսագիտության տեսության մյուս կարևոր բնագավառը, որն այսօր խոր ուսումնասիրություն, մարդկության բնապատմական զարգացման տեսակետից նորովի մոտեցում, մտածողության նոր սիստեմ է պահանջում, մարդկության գործունեության ոլորտների տնտեսագիտական (քաղաքատնտեսական) լուսաբանումն է։ Ինչպես հայտնի է, մարդկային հասարակությունը ելնելով իր նյութական և հոգևոր անընդհատ աճող ու փոփոխվող պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունից, ստեղծել է իր գործունեությանը համապատասխան նյութական արտադրության, հոգևոր արտադրության և ծառայության ոլորտներ։

Մարդկային գործունեության նշված ոլորտները մեր տնտեսագիտական գրականության մեջ, հատկապես քաղաքատնտեսության ձեռնարկներում, մեկնաբանվում են անցյալ դարում տրված գնահատականներով, որոնցում, ինչպես հայտնի է, գերիշխել է սոցիոլոգիան։ Նշված ոլորտները չեն քննվել լայն, հասարակական անհրաժեշտության, հասարակության զարգացման, մարդկային պահանջմունքների բավարարման տեսանկյունից, այլ դիտվել ու գնահատվել են միայն նյութական բարիքների արտադրության, արժեքի ստեղծման առումով։ Հետևապես, այդ ոլորտների հասարակական, տնտեսագիտական արժեքավորումը նման մոտեցումներով ճիշտ լինել չի կարող։

Մարդկության գործունեության ոլորտների գիտական մեկնաբանումը և հասարակության զարգացման ու նրա պահանջմունքների բավարարման գործում դրանց դերի ճիշտ գնահատումը հնարավորություն կտան նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները ճիշտ բաշխել այդ ոլորտների միջև ու ապահովել հասարակության իրական պահանջմունքներին համապատասխան նշված ոլորտների համամասնական զարգացումը։ Պատահական չէ, որ մարդկային գործունեության ոլորտների ոչ ճիշտ գնահատման, ծրագրավորման և պլանավորման հետևանքով ոչ մի ոլորտ (նյութական, հոգևոր արտադրությունների և ծառայությունների) իր հասարակական նշանակմանը, այսօրվա պահանջներին համապատասխան, չի ծառայում։

Գիտատեխնիկական հեղափոխության ծավալումն էապես փոխում է մեր պատկերացումները մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտի գնահատման, դրա զարգացման միտումների, ռեսուրսների ընդգրկման (ֆինանսական, աշխատանքային, նյութական) ծավալի և բաժնի վերաբերյալ։ Տրամաբանությունն այն է, որ գիտատեխնիկական առաջադիմության ծավալումը, նյութական արտադրության ոլորտի պրոցեսների ավտոմատացումը, «անմարդ արտադրություններին» կազմակերպումն անխուսափելիորեն նեղացնում են այդ ոլորտում մարդկային ռեսուրսների ընդգրկման հնարավորությունները. ավելին տեխնիկական բարձր զարգացման մակարդակ ունեցող երկրների մասշտաբով այն ձեռք է բերում նվազման միտում։ Այլ խոսքով, տեղի է ունենում հասարակական աշխատանքի ծախսման ծանրության կենտրոնի փոփոխում, այն նյութական արտադրությունից շարժվում է դեպի հոգևոր արտադրության և ծառայությունների ոլորտները։ Հետևապես հասարակությունը պետք է համապատասխան ծրագրերի մշակման միջոցով իրականացնի աշխատանքային, ինչպես նաև նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման ուղիների գիտական կանխատեսումները։

Սովետական տնտեսագետների համար տեսական հետազոտության և գործնական հետևությունների լուրջ բնագավառ է մնում սոցիալիստական սեփականության էվոլյուցիան ու դրա իրացման ձևերի պրոբլեմի գիտական մշակումը։ Սեփականության բազմաթիվ ձևերը՝ համաժողովրդական, պետական, կոոպերատիվ, հասարակական կազմակերպությունների, փայատիրական, համատեղ, մասնավոր, անհատական, անձնական և այլն, սոցիալիզմի ծամանակ պահանջում են դրանց անհրաժեշտության, օբյեկտի և իրացման ձևերի գիտական մեկնաբանություն։ Ավելին, սեփականության ձևերի բազմազանության պայմաններում զգացվում է սոցիալիստական արտադրական հարաբերությունների նորովի մեկնաբանման, նոր բնութագրման անհրաժեշ-

տություն։ Սեփականության տարբեր ձևերի վրա բարձրացող հարաբերությունների համակարգերի ու դրանց փոխկապակցությունների ուսումնասիրությունը և քաղաքատնտեսական մեկնաբանումը տեսական հետազոտությունների մի մեծ բնագավառ է, որին պետք է ձեռնամուխ լինեն նաև մեր հանրապետության տնտեսագետները։ Տրամաբանական է, որ դա, առաջին հերթին, կպահանջի սոցիալիստական արտադրական հարաբերությունների բնութագրման մերկ լոզունգային հայտարարություններից անցում կատարել դրանց բովանդակության գիտական բացատրությանը, բազմահիմք սեփականատիրական հարաբերությունների բնութագրմանը։ Եվ երկրորդ, սեփականության բազմաձևությունը սոցիալիզմի ժամանակ պահանջում է նաև տնտեսական օրենքների գործողության մեխանիզմի բազմակողմանի ուսումնասիրություն, տնտեսական յուրաքանչյուր կատեգորիայի դերի գիտական մեկնաբանություն։

Չի բացառվում, որ մեր հասարակական, տնտեսական կյանքի այս բնագավառում խոր արմատական վերափոխումների, նոր պրոցեսների ուսումնասիրությունը կհանգեցնի գիտական նոր ընդհանրացումների, ինչպես նաև սոցիալիստական արտադրական հարաբերությունների բովանդակության մի շարք տեսական նոր դրույթների ձևակերպման, որոնք կարող են հակասել սոցիալիզմի մեր պատկերացումներին։ Նույնը կարելի է ասել սոցիալիզմի ժամանակ գործող տնտեսական օրենքների և կատեգորիաների բովանդակության ու գործողության մեխանիզմի գիտական բացատրության, գնահատման մասին։ Դա տրամաբանական է, քանի որ սեփականության բազմաձևության առկայության պայմաններում վերականգնվում են հասարակական ֆորմացիաների, հետևապես դրանց արտադրական, տնտեսական հարաբերությունների ընդհանրացման շատ կողմեր, որոնք անխուսափելիորեն կժխտեն պետական համաժողովրդական և կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականության անբաժանելի տիրապետության առկայության հիմքի վրա սոցիալիզմին վերագրվող բացառիկ առավելությունները տնտեսական օրենքների և կատեգորիաների գործողության բնագավառում։

Տնտեսագետների հետազոտության, ինչպես նաև մտահոգության առարկան կդառնան ապրանքը և ապրանքային հարաբերություններն իրենց ընդլայնվող ոլորտներով ու հակասություններով, ներքին և արտաքին շուկաներն իրենց հակասություններով, բարդություններով և ներքին մեխանիզմով, արժեքը, գինը և արժեքի օրենքն իրենց գործողության ասպարեզներով, բարդ ֆունկցիաներով և կարգավորող մեխանիզմներով, փողն ու փողային հարաբերությունները, այդ հարաբերությունները կարգավորող օրինաչափությունները և այլն, որոնք, ըստ էության, սովետական տնտեսագիտության հետազոտության օբյեկտ չեն հանդիսացել սոցիալիզմի ժամանակ «պրոբլեմային» չլինելու պատճառով։

Սոցիալիզմի ժամանակ հասարակության տնտեսական և քաղաքական կյանքի վերակառուցումը, այսպես կոչված «պրոբլեմային չհանդիսացող» տնտեսագիտական գրականության մեջ ոչ գիտական, լոզունգային լուծում ստացած պրոբլեմները գիտական նոր հետազոտության և ընդհանրացման կարիք են զգում։

Այսօր մենք պետք է ընդունենք, որ սոցիալիզմի հիմնավոր, մշակված գիտական կոնցեպցիա չունենք։ Մենք այսօր չունենք նաև ժամանակակից կապիտալիզմի գիտական կոնցեպցիա։ Մենք փաստորեն չունենք այսօրվա հասարակության տնտեսական հարաբերություններն ամբողջացնող տեսություն։

Տնտեսագետների, հասարակագետների խնդիրն է տեսության բնագավառում հիմնավորապես մերժել բոլոր դոգմաները, անկախ նրանից թե ում ստեղծագործությունն են դրանք։ Բայց դրանք մերժելու, ժխտելու համար պետք է գիտականորեն հիմնավորվի այն նորը, որն իրոք մարդկության համընդհանուր առաջընթաց է ապահովում։

Մենք պետք է գտնենք, գիտականորեն հիմնավորենք հասարակական հարաբերությունների այն համակարգը, որը կարող է մարդկության անընդհատ աճող ու փոփոխվող պահանջմունքների պայմաններում ապահովել ամենաբարձր կենսամակարդակ։ Սոցիալիզմի այս մոդելն է պարզ, հասկանալի և ընդունելի մարդկանց համար։ Միայն այս մոդելով կարող ենք պայքարել սոցիալիզմի համար։

Մնացած բոլոր «ստեղծագործությունները», մոդելները, որոնք չեն լուծում այդ խնդիրը կամ չեն ծառայում այդ խնդրի լուծմանը, գիտական լինել չեն կարող և պետք է հրաժարվել դրանցից։

Տնտեսագետների տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտությունների կարևոր բնագավառը, որը սերտորեն առնչվում է վերակառուցման խնդիրները լուծելու հետ, հասարակական արտադրության (նյութական և հոգևոր) արդյունավետ կառավարման տնտեսական մեխանիզմի մշակումն է։ Մի բան պարզ է, որ այդ մեխանիզմը պետք է հպատակեցվի հասարակության և նրա անդամների պահանջմունքների բավարարմանը։ Այլ խոսքով, հասարակական արտադրության (նյութական և հոգևոր), ծառայությունների ոլորտի գործունեության գնահատման չափանիշը պետք է լինի հասարակության և նրա անդամների պահանջմունքների բավարարման մակարդակը։ Ուրեմն, պետք է մշակվի այդ ոլորտների գործողության տնտեսական այնպիսի մեխանիզմ, որտեղ թելադրող ֆունկցիա իրականացնի ոչ թե արտադրողը, այլ սպառողը, որովհետև նա կարող է իմանալ, թե իր պահանջմունքները բավարարելու համար ինչ է պետք։ Այստեղից հետևում է, որ հասարակական արտադրության և ծառայությունների կազմակերպման մեխանիզմը պետք է կառուցվի վերարտադրության սպառման փուլի խնդիրները լուծելու՝ այդ փուլում ձևավորված հասարակական պահանջմունքի բավարարման թելադրանքի վրա։

Մեր երկրում, դժբախտաբար, հրամայական կառավարման, արտադրողի թելադրող դերի տնտեսական մեխանիզմի ձևավորման հետևանքով սպառման փուլը որպես հետազոտության օբյեկտ տասնյակ տարիներ դուրս է մնացել անգամ տնտեսագետների ուսումնասիրության տեսադաշտից։ Ավելին, այն որպես կառավարման օբյեկտ դուրս է մնացել նաև ՍՍՀՄ սահմանադրությունից։ Եվ դա տրամաբանական է, հրամայական կառավարման տնտեսական մեխանիզմի սիստեմում արտադրության, բաշխման, փոխանակության փուլերի պետական պլանավորման միջոցով կարգավորման մեխանիզմի մշակման և իրականացման պայմաններում սպառման փուլին բաժին է ընկնում ամենապասսիվ ֆունկցիան՝ այն ինչ հրամցվում է այդ փուլում, դրանով յոլա գնալու ֆունկցիան։ Ամեն ինչ արտադրվում է, բաշխվում է, փոխանակվում է պետական պլանով, պետության սահմանած գներով ու կարգով, հետևապես սպառողը և սպառման փուլը որևէ ֆունկցիա ունենալ չեն կարող։ Դա նշանակում է, որ սպառողները կարող են սպառել միայն այն, ինչն իրենց տրվում է, և ոչ թե այն, ինչն իրենք պահանջում են, ինչի կարիքը զգում են։

Նյութական և հոգևոր բարիքների վերարտադրության փուլերի կառավարման համակարգում սպառման փուլին պասսիվ, իրեն ոչ յուրահատուկ մյուս փուլերի գործողությունները չկարգավորող ֆունկցիայի ընձեռումն անխուսափելիորեն հասցրեց հասարակական պահանջմունքները չբավարարող ապրանքային մեծ մասսայի թողարկման հետ միասին իրական պահանջմունքները բավարարող ապրանքային ամբողջ մասսայի դեֆիցիտի առաջացման։ Այն ամենը, ինչ արտադրական և անձնական սպառման պահանջարկ է ներկայացնում, դառնում է դեֆիցիտ։ Աշխարհում ամենաշատ պողպատ, հաստոց, տրակտոր, կոշիկ և այլն արտադրող երկիրը դրանց ներմուծման կարիք է զգում։ Այդ բոլորը խոսում են այն մասին, որ տեղի է ունեցել արտադրության խզում սպառումից, առաջ է եկել հակասություն վերարտադրության երկու փուլերի միջև, որի լուծումը պահանջում է տնտեսագիտական

լուրջ ուսումնասիրություն, գիտականորեն հիմնավորված մեխանիզմի մշակում։

Մի բան պարզ է, որ տասնյակ տարիներով մեր երկրում ձևավորված արտադրության և սպառման միջև հակասության լուծումը պահանջում է տնտեսական այնպիսի մեխանիզմի մշակում, որտեղ թելադրողի ֆունկցիան արտադրողից անցնի սպառողին։ Այդ խնդրի իրականացման համար, մեր կարծիքով, տնտեսագետները որոշադարձ պետք է կատարեն դեպի շուկայական հարաբերությունների ուսումնասիրությունը, ներքին և արտաքին շուկաների կոնյունկտուրաների փոփոխությունների միտումների պարզաբանումը, տարբեր ապրանքային խմբերի և տեսակների նկատմամբ պահանջարկի և առաջարկի փոփոխության միտումները, «շուկայական սոցիալիզմի» մտացածին կեղծ տեսության մերկ քննադատությունից անցնեն երկրի ներքին և արտաքին շուկաների ուսումնասիրությանը, շուկայի կառավարման մեխանիզմի տիրապետմանը։ Մի խոսքով, խնդիրը հասարակական իրական պահանջմունքների ուսումնասիրության միջոցով բացահայտված պահանջների հիման վրա արտադրության և ծառայությունների կազմակերպումն է։ Միայն այդ ճանապարհով հնարավոր կլինի հասնել արտադրողի նկատմամբ սպառողի թելադրանքի մեխանիզմի մշակմանը, ապրանքային մասսայի դեֆիցիտի վերացմանը, սպասարկման և ծառայությունների բարձր մակարդակի ապահովմանը։

Կառավարման այդ համընդհանուր մեխանիզմի ձևավորման հետ միասին, գիտական և գործնական կարևոր նշանակություն են ձեռք բերում հասարակական արտադրության արդյունավետության չափանիշների, աշխատանքի արտադրողականության, ազգային եկամտի հաշվարկման մեթոդիկաների, ինչպես նաև չափանիշների գիտական ուսումնասիրությունը, հակածախսային մեխանիզմի, գների և գնագոյացման կարգադրական համակարգից, իրական հասարակական ծախսերի և հասարակական պահանջմունքների հաշվառման կարգավորող մեխանիզմի մշակման համակարգին անցումը և այլն, որոնք անխուսափելի են հասարակական տնտեսական կյանքի կառավարման գիտական կուռ մեխանիզմ ստեղծելու համար։

Վերակառուցման տեսական և գործնական խնդիրների լուծումը պահանջում է գիտական լայն հետազոտություններ իրականացնել ծառայությունների և սպասարկման ոլորտի հասարակական կազմակերպման և գնահատման բնագավառում։

Նախ պետք է նկատել, որ ծառայությունների և սպասարկման ոլորտը, ինչպես արդեն նշվեց, սովետական տնտեսագետների հետազոտության ոլորտից ընդհանրապես դուրս է մնացել։ Այն դիտվել է հասարակական արտադրության մեջ էական ֆունկցիա չիրականացնող, ուծանցվող ոլորտ, որը չի մասնակցում հասարակական արժեքի ստեղծմանը, կատարում է միայն հասարակական պասսիվ ֆունկցիա։ Մի շարք տնտեսագետների աշխատություններում ծառայությունների ոլորտը քննվում է միայն նյութական արտադրության որոշ պրոբլեմների հետազոտման առնչությամբ։ Սոցիալիզմի ժամանակ այդ ոլորտի հասարակական-տնտեսագիտական գնահատման, ֆունկցիաների, դերի, հասարակության և նրա անդամների պահանջմունքների բավարարման, դրա կազմակերպման և կառավարման սկզբունքների համալիր ուսումնասիրություն չի կատարվել։

Պետք է նկատել, որ ծառայությունների և սպասարկման ոլորտն իր բազմաֆունկցիոնալ բնույթով առաջ է եկել մարդկության հասարակական պահանջի, կարիքի թելադրանքով և այդ իմաստով այն մարդկային գործունեության հասարակականորեն անհրաժեշտ ոլորտ է։ Հասարակության առաջընթացի, մարդկային պահանջմունքների զարգացման և փոփոխման ազդեցության ներքո անընդհատ զարգանում ու փոփոխվում են նաև ծառայության ոլորտի ֆունկցիաները, ծառայությունների որոշ տեսակներ կորցնում են իրենց նշանակությունը, առաջ են գալիս և ձևավորվում են ծառայությունները

ների նոր տեսակներ և այլն։ Դրանց ուսումնասիրությունը, զարգացման միտումների բացահայտումը, կառավարման և կազմակերպման գիտական հանձնարարականների մշակումը տնտեսագետների կարևոր ու անհետաձգելի ֆունկցիան է։

Կյանքը ցույց է տալիս, որ զարգացած հասարակարգում, առանց ծառայությունների ոլորտի բարձր կազմակերպված սիստեմի, անհնար է բարձր կենսամակարդակի ապահովում, որը, ինչպես արդեն նշվեց, հասարակական ամբողջ արտադրության (նյութական և հոգևոր), նրա կազմակերպման սիստեմի արդյունավետության ցուցանիշն է։

Ծառայությունները որպես նյութական և հոգևոր բարիքները անմիջական սպառողներին հասցնելու, ինչպես նաև մարդկային որոշակի պահանջմունքների անմիջական բավարարման ոլորտ, գնահատման, պլանավորման նոր ցուցանիշներ, կազմակերպման և կառավարման նոր ձևեր են պահանջում։ Ծառայության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տրանսպորտը, կապը, առողջապահությունը, բնակարանային-կոմունալ սպասարկումը, ինֆորմացիոն ծառայությունների ամբողջ համակարգը և այլն հասարակական գնահատման նոր ցուցանիշներ են պահանջում։ Այսօրվա գործող ցուցանիշները (բեռնաշրջանառություն, մահճակալներով ապահովվածություն կամ մահճակալաշրջանառություն, 10 հազար բնակչին ընկնող բժիշկների թիվը, ընտանիքները առանձին տներով կամ բնակարաններով ապահովելու ծրագիրը, գրքային ֆոնդը և այլն) հեռու են այդ բնագավառների գործունեության իրական պատկերը, ինչպես նաև հասարակական և անհատական պահանջմունքները բավարարելու մակարդակը բնութագրելուց։

Ուստի տնտեսագետների, սոցիոլոգների, հոգեբանների համատեղ հետազոտական գործունեության միջոցով պետք է գտնել սպասարկման ոլորտի տարբեր օղակների գնահատման այնպիսի ցուցանիշներ, որոնք ուղղակի կապ ստեղծեն մարդու ակտիվ գործունեության և անհատի, կոլեկտիվի և հասարակության պահանջմունքի լավագույն բավարարման միջև։

(շարունակելի)